

**ԲԱՌԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՔԱՆԻ
ՀԱՐՑԵՐ**

Ա. Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Լեզուն հասարակական երևույթ է. այն առաջացել է հասարակության զարգացման գործընթացում որպես անհրաժեշտություն և պահանջ՝ ապահովելու հաղորդակցումը այդ հասարակության անդամների միջև: Ծագած լինելով մարդկային հասարակության ձևավորման ընթացքում՝ լեզուն արտացոլել է այդ հասարակության գիտակցության, մտածողության նվաճումները: Զարգանալով հասարակության հետ և ծառայելով նրան որպես հաղորդակցման միջոց և մտածողության նյութական ձև, լեզուն կրում է բազմաթիվ փոփոխություններ. իրականացվում է բառակազմի հարստացումը, նրա քերականական կառուցվածքի հղկումն ու կատարելագործումը: Լեզվի անընդհատ զարգացումը հանգեցնում է ներքին իբրև նյութական միավորների համակարգի, ձևավորմանն ու մշակմանը: Լեզվի այդպիսի համակարգեր են խոսքի մասերը: Լեզվի բառապաշարի դասակարգումն ըստ խոսքի մասերի լեզվաբանության պրոբլեմային և ամենափիճելի հարցերից մեկն է: Լեզվաբանական զանազան ուղղություններ, հոսանքներ և դպրոցներ խոսքի մասերի դասակարգման հիմքում դրել են տարբեր հիմունքներ և հանգել տարբեր, հաճախ իրարամերժ արդյունքների: Ավելին, լեզվաբանության պատմության ընթացքում որոշ լեզվաբաններ նույնիսկ ավելորդ համարեցին բառերի դասդասումն ըստ խոսքի մասերի: Նրանք խոսքի մասերի ճանաչման նկատմամբ լիակատար թերահավատություն ցուցաբերեցին: «Բառերի բաժանումը գոյականների, բայերի, ածականների լեզվաբանական անհերքելի ճշմարտություն չէ»¹ — գրում է Ժենի սոցիոլոգիական դպրոցի հիմնադիր Ֆ. դե Սույուրը: Ինչևէ, ժամանակակից լեզվաբանության մեջ առավել տարածվածը տալը խոսքի մասերի տեսությունն է, որոնք առանձնացվում են ըստ բառերի արտահայտած ընդհանուր իմաստի, ձևաբանական առանձնահատկությունների և շարահյուսական կիրառությունների:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոսքի մասի բառակազմը մշտապես եմփարկվում է փոփոխությունների քանակական տեսակետից՝ մի կողմից բառակազմության միջոցով (ածանցում, բառաբարդում), մյուս կողմից խոսքիմասային փոխանցումով. սա այն երևույթն է, երբ բառը կամ բառաձևը, չկրելով արտաքին որևէ փոփոխություն՝ առանց բառակազմական լրացուցիչ միջոցի, փոխում է իր խոսքիմասային արժեքը և վերածվում այլ խոսքի մասի:

Հայերենում առավել հետաքրքրական են ածականից գոյական խոսքիմասային փոխանցումները, որոնք մեծ թիվ են կազմում, և մեր լեզվի պատմական զարգացման գործընթացում այդ երևույթը դարձել է օրինաչափություն:

Ածականից գոյական փոխանցման տեսությանը մենք չենք անդրադառնա, միայն նրանք, որ փոխանցումները բառերի բառական, ձևաբանական, շարահյուսական հատկանիշների յուրատեսակ փոփոխության արդյունք են: Ածականները եմփարկվել են խոսքիմասային փոխանցման՝ փոխանվանական կիրառության, ածական-գոյական կայուն բառակապակցության կրճատման, ստուգաբանական իմաստից հետացման հիմքերով պայմանավորված²:

Ածականից գոյական փոխանցման երևույթը հատուկ է նաև ռուսերենին: Այսպես, Ա. Ն. Գվոզդևը, մեկնաբանելով խոսքի մասերի դասակարգման հիմունքները և դրանց միջև եղած փոխադարձ կապը, անդրադառնում է նաև խոսքիմասային փոխանցման երևույթին,

¹ Փ. Соскюр. Курс общей лингвистики. М., 1933, с. 110.

² Խոսքիմասային փոխանցման տեսությանը վերաբերող հարցերը, տե՛ս Ա. Պ. Հայրապետյան, Ածանցավոր ածականների խոսքիմասային փոխանցման հիմունքները, ուղղությունները, տեսակները և հիմքերը (Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1988, № 3, էջ 199—204):

նշելով, որ բառերի խոսքի մասերով դասակարգումը լեզվում անփոփոխ չէ, որ այս կամ այն խոսքի մասերին պատկանող կայուն, մշտական բառերի կողքին հանդիպում ենք դեպքեր, երբ բառը մի խոսքի մասից փոխանցվում է մյուսին: Ա. Ն. Գվոզդևը գտնում է, որ այսպիսի փոխանցումը բնութագրվում է նրանով, որ բառը, պահպանելով իր արտաքին տեսքը, փոխում է իր իմաստային, ձևարանական և շարահյուսական առանձնահատկությունները: Լեզվաբանը օրինակ է բերում *мостовая* բառը, որը դադարելով անարկայի հատկանիշ ցույց տալուց (*мостовая улица*) և ստանալով «ծանապարհի ծածկույթ» իմաստ, սկսեց օգտագործվել ենթակայի և խնդրի պաշտոնով (գոյական լիակատար փոխանցում), ինչպես՝ *Мостовая полита водой* կամ *Бригада ремонтирует мостовую*³: Ռոգենտայի խմբագրությամբ կազմված «Современный русский язык» ձեռնարկում քննված են խոսքիմասային փոխանցման երևույթին վերաբերող բազմաթիվ հարցեր (էջ 308—309): Ածականներից գոյականներին փոխանցումը (*субстантивация*) հին և միաժամանակ զարգացող գործընթաց է համարվում: *-Ив, -ов* և որոշ այլ վերջածանցներով ազգանունների կամ բնակության վայրերի անվանումների ածականից գոյական փոխանցման գործընթացը իրենց ծագումով ուսաց լեզվի վաղ շրջանին է վերաբերում, ինչպես՝ *Кузьмин, Иванов, Марино*, իսկ ահա՝ *ванная, операционная* բառերը անհամեմատ ավելի ուշ շրջանի ածականներից գոյական փոխանցումներից են:

Տարբերակվում է գոյականացման երկու տեսակ՝ լիակատար գոյականացում (*полная субстантивация*), երբ բառերը այլևս չեն կարող օգտագործվել որպես ածական, ինչպես՝ *портной, мостовая, приданное* և այլն, և մասնակի գոյականացում (*частичная субстантивация*), երբ բառը միաժամանակ օգտագործվում է կ' որպես ածական, կ' որպես գոյական, ինչպես՝ *военный, знакомая, слепой* և այլն:

Ստորև տալիս ենք բառարաններից քաղելով, ինչպես նաև ուս գրականության մեջ և մամուլում օգտագործված ածականից գոյական փոխանցումների մի շարք օրինակներ՝ կատարելով հետևյալ դասակարգումը⁴.

1. Սեմյակների, արհեստանոցների, հիմնարկությունների և այլ կառույցների անուններ՝ *детская* (մանկանոց, մանկատնային), *булочная* (հացի խանութ), *прихожая* (նախասենյակ), *кладовая* (խորդանոց, պահեստասենյակ), *операционная* (վիրահատարան), *прачечная* (վազքատուն), *парикмахерская* (վարպալիրանոց), *столовая* (ճաշասենյակ), *закусочная* (խորտկարան), *ванная* (լողասենյակ), *профессорская* (պրոֆեսորական), *учительская* (ուսուցչանոց), *пивная* (գարեջրարան), *справочное* (տեղեկատու բյուրո), *кулинарная* (խոհարարական խանութ), *мастерская* (արհեստանոց), *кондитерская* (հրուշակեղենի խանութ):

2. Գործողի անուններ՝ *дневальный* (օրապահ, հերթապահ), *рядовой* (շարքային), *штабной* (շտաբական), *больной* (հիվանդ), *бедный* (աղքատ), *богатый* (հարուստ), *портной* (դերձակ), *вожатый* (շոկատավար, ուղեկցորդ), *горничное* (աղախին), *часовой* (ժամապահ), *зодчий* (ճարտարապետ), *городничий* (քաղաքապետ), *арестованный*, *включенный* (կալանավոր), *постовой* (ժամապահ), *беспартийный* (անկուսակցական), *ссылный* (աքրորական), *участковый* (տեղամասային տեսուչ), *горбатый* (սալատավոր մարդ), *военный* (զինվորական), *знаковый* (ծանոթ անձնավորություն), *рабочий* (բանվոր), *прохожий* (անցորդ), *дежурный* (հերթապահ), *лесничий* (անտառապահ), *слепой* (կույր), *раненый* (վիրավոր), *учёный* (գիտնական), *ведущий* (հաղորդավար), *безработный* (գործազուրկ), *знакомая* (ծանոթ աղջիկ) և այլն: Գործողի անուն ցույց տվող բառերի մի մասը գոյականացել են հոգնակի ձևով՝ *родные* (հարազատներ), *близкие* (մերձավորներ), *молодые* (նորասերներ):

3. Փառաբանողների անուններ՝ *дарственная* (նվիրագիր, ընծայագիր), *накладная* (սալարճրագիր), *родословная* (տոհմագրություն) և այլն:

4. Ուտելիքների և խմիչքների անուններ՝ *холодное* (սառը կերակուր), *горячее* (տաք կերակուր), *первое* (ճաշ), *сладкое* (քաղցրապենիք), *солёное* (աղ դրած կերակուրներ), *пирожное* (կարկանդակ), *заливное* (լցնած խմիչք), *мороженое* (պաղպաղակ), *шампанское* (շամպայն), *жаркое* (տապակ), *спиртное* (ոգելից խմիչք) և այլն:

5. Վերացական անուններ՝ *будущее* (սալագան, գալիքը), *прекрасное* (գեղեցիկը) և այլն:

6. Սպորտային ասպարեզում գործածված որոշ բառեր՝ *сборная* (կապարկաճ), *уг-*

³ А. Н. Гвоздев. Современный русский литературный язык. М., ч. I, 1973, с. 139—143.

⁴ Հմմտ. Современный русский язык (под ред. Д. Э. Розенталя). 4-ое изд. испр. и доп., М., 1984, էջ 324—325.

ловой (удар) (անկյունային), запасной (ягрок) (պահեստային), штрафной (удар) (տոգահային) և այլն: Այս փոխանցումները ածական-գոյական կայուն բառակապակցությունների կրճատման օրինակներ են, երբ ածական-որոշիչը իր իմաստային գոտին է ներառել մաս գոյական-որոշչաի առարկայական իմաստը. угловой, запасной, штрафной, сборная բառերում առկա է ինչպես հատկանիշի գաղափարը, այնպես էլ գոյականի առարկայական իմաստը, սրանք ածականից-գոյական մասնակի խոսքիմասային փոխանցումներ են:

7. Երգի տեսակ՝ **колыбельная** (օրորոցային երգ), **застольная** (սեղանի երգ):

8. Որոշ ածականներ վերածվել են տերմինների՝ **добр** բերելով գոյականական արժեք՝ **существительное** (գոյական), **прилагательное** (ածական), **числительное** (թվական), **гласный** (ձայնավոր), **согласный** (բաղաձայն), **швыпящие** (շշականներ), **запятая** (ստորակետ), **кривая** (կորագիծ) և այլն:

Խոսքիմասային փոխանցումներ են մաս **приданое** (օժիտ), **вселенная** (տիեզերք), **скорый** (արագընթաց գնացք), **животное** (կենդանի), **передовая** (առաջնորդող հողված), **посевная** (ցանք) և այլն:

Այսպիսով, ուսուերենի ածականները գոյականացման գործընթացում կորցնում են գոյականի հետ համաձայնությունը, սեռերով փոխվելու հատկությունը, համեմատության աստիճաններ կազմելու ունակությունը, **պահպանում** են համապատասխան սեռի ածականներից հատուկ հոլովման համակարգը, **добр** են բերում որոշակի սեռ (ինչպես՝ **работяга—муж. р., мастерская—жен. р., животное—ср. р.**) և մախադասության մեջ ենթակայի ու խնդրի պաշտոնով գործածվելիս՝ համաձայնեցված որոշիչ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսուերենում ածականից գոյական խոսքիմասային մասնակի և լիակատար փոխանցումները հիմնականում ածական-գոյական կայուն բառակապակցության կրճատման գործընթացի արդյունք են, ինչպես **справочное бюро > справочное, военный человек > военный, рядовой солдат > рядовой** և այլն: Այս երևույթը հատուկ է մաս հայերենի ածականից գոյական փոխանցումներին՝ կոմերիտական երիտասարդ > կոմերիտական, հանածո հանքանյութ > հանածո, կապավոր զինվոր > կապավոր և այլն: Դժվար չէ նկատել, որ մի շարք բառեր ուսուերենում և դրանց համարժեքները հայերենում խոսքիմասային փոխանցումներ են՝ **больной**—հիվանդ, **военный**—զինվորական, **рядовой**—շարքային, **справочное**—տեղեկատու, **существительное**—գոյական և այլն:

Անգլերենում նույնպես առկա է ածականից գոյական փոխանցման երևույթը: Տարբերակվում են լիակատար գոյականացած ածականներ (*wholly substantivized adjectives*), որոնք ունեն գոյականի բոլոր կատեգորիաները՝ թիվ, հոլով և հիմնականում գործածվում են անորոշ (*a*) և որոշյալ (*the*) հոդերի հետ, ինչպես՝ *a native, the native, the natives, a native's hut*:

Որոշ լիակատար գոյականացած ածականներ ունեն միայն հոգնակի թիվ, ինչպես՝ *sweets, ancients, greens, Jermans* (բայց մաս *a Russian*) և այլն:

Մասնակի գոյականացած ածականները (*partly substantivized adjectives*) դրսևորում են գոյականների որոշ հատկանիշներ և օգտագործվում են, որպես կանոն, որոշյալ *the* հոդի հետ. սրանք ամբողջ դասի անվանումներ են՝ (*the rich, the poor, the unemployed*) կամ վերացական գաղափարներ (*the good, the evil, the future, the past*)⁵:

The poor boy բառակապակցության մեջ *poor* բառը ածական է և ցույց է տալիս *the boy* գոյականի հատկանիշը՝ **աղքատ տղան**: Բայց *the poor have nothing to eat* մախադասության մեջ թարգմանվում է **աղքատները, չքավորները, այսինքն՝ «Աղքատները ոչինչ չունեն ուտելու»**: Այդպես էլ՝ *the rich people* (հարուստ մարդիկ)—*the rich* (հարուստները), *the unemployed worker* (գործազուրկ քանվորը)—*the unemployed* (գործազուրկները), *the future hopes* (ապագա հույսերը)—*the future* (ապագան), *the present moment* (ներկա պահը)—*the present* (ներկան) և այլն: *The rich, the poor, the unemployed* և նրանց այլ բառերը ընդունված է անվանել *plurality tantum* (անեզականներ), իսկ *the future, the present* և այլն՝ *singularity tantum* (ամհոգնականներ): Ածականից գոյական փոխանցումները Մ. Յ. Բլոխը անվանում է «*adjectivids*», որոնք այս կամ այն չափով դրսևորում են ածականի և գոյականի արժեքներ⁶:

Փաստերից երևում է, որ ածականների մասնակի և լիակատար գոյականացումը հատուկ է ռուսերենին և լանգերենին, իսկ այդ գործընթացում դրսևորվող այս կամ այն առանձնա-

⁵ Каушанская и др. Грамматика английского языка, Л., 1963, с. 51.

⁶ М. У. Blokh, A Course in Theoretical English Grammar. М., 1983, p.212—213.

հատկությունները բխում են ռուսերենի և անգլերենի քերականական կառուցվածքից:

Հայերենի գարգացման տարբեր փուլերին նույնպես հատուկ է եղել ածականից գոյական փոխանցումները:

Առանձնապես մեծ թիվ են կազմում -ակամ ածանցով բառերը, որոնք փոխանվանական կիրառության, ածական-գոյական կայուն քառակապակցության կրճատման և ստուգաբանական իմաստից հետագաման հիմքերով պայմանավորված ընդգրկվել են խոսքիմասային փոխանցման ոլորտը՝ կատարելով մասնակի կամ լիակատար փոխանցում: Խոսքիմասային մասնակի փոխանցումները այս կամ այն չափով դրսևորում են ածականի և գոյականի իմաստային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններ. դրանք դրսևորում են երկու խոսքի մասի արժեքներ, ուստի ընդունված է անվանել խոսքիմասային երկարժեք բառեր:

-Ակամ ածանցով ածականից գոյական մասնակի փոխանցումները ունեն հետևյալ իմաստները.

1. Նախատիպը, որից կազմվել է ածանցավոր ածականը, անձի հատուկ անուն է: Այսպիսի նախատիպից -ակամ ածանցով կազմված ածականները բացի «նախատիպին վերաբերող՝ հատուկ» ընդհանուր քառակազմական իմաստից, խոսքիմասային փոխանցումով պայմանավորված արտահայտում են նաև «նախատիպ գոյական անձի անվան հետ կապված գաղափարական ուղղություն, փիլիսոփայական դպրոցների, կրոնական հոսանքների կողմնակից, պատկանող, դավանող անձ» քառակազմական նշանակություն: Այսպիսի կազմությունները ընդհանուր գործածական չեն և հատուկ են միայն մասնագիտական գրականությանը: **Պլատոնական** բառը ոչ միայն ածական է «պլատոնականությանը հատուկ» իմաստով, այլև գոյական՝ «պլատոնականության հետևորդ» իմաստով: Ածականից գոյական նմանատիպ փոխանցումներ են՝ բուդդայական, մովսիսական, թալմադական, չուփերական, հեզելական, պետրաշեական, դարվինական, կանտական, պլուրալիստական, մահմեդական, ռադիչևական: Բերենք քննադրային մի քանի օրինակներ. **Մահմեդական** հրեշների թողած պակասը դրանք էին լրացնում և դեռ մի բան էլ ավելին (Մուրացան),—ած.: Այս գործողությունը մահմեդականների մեջ նույն նշանակությունն ունի, որպես քրիստոնյաների մեջ երես խաչակնքելը (Բաֆֆի),—գոյ.:

2. Այս խմբի բառերը արտահայտում են «նախատիպի հատկանիշն ունեցող կամ նրա անվան հետ առնչվող ուսմունքի կողմնակից՝ հետևորդ» քառակազմական նշանակություն՝ ալվեստարական, տաճարական, բողոքական, աղանդավորական, քրահմայական, կրոնական, համաստվածական, պապական, դուրանական, հնաձիսական, լուսավորչական և այլն: Օրինակներ. **Մեծից** մինչև փոքր կոնանում և համբուրում էին լուսավորչական խաչը (Ա. Բակունց),—ած.: Մի՞թե անկիրթ հայ լուսավորչականը միևնույն աչքով չէր նայում նրանց վրա, մի՞թե նա բողոքականին և կաթոլիկին հայ է համարում (Բաֆֆի),—գոյ.:

3. Հասարակական, քաղաքական կուսակցությունների կամ խմբակցությունների անդամ, գաղափարակից, կողմնակից՝ հանրապետական, պահպանողական, միապետական, սահմանադրական, դաշնակցական, պառլամենտական, անջատական, համաձայնողական, հաշտվողական, կուսակցական. կոմերիտական, հակահեղափոխական, հեղափոխական, հակամիապետական, հակապառլամենտական, գաղափարական, կղերական, ազատական, ազգայնական, աղքատական, ծերակուտ սկան: Դիցուք. Իսկ վտանգավորն այն էր, որ նա մտքրեց մի նոր և, հայոց եկեղեցու հոգուն հակառակ, բոլորովին այլ կղերական ուղղություն (Բաֆֆի),—ած.: Հասկանալի է, որ այսպիսի դրության հետավոր միտքն անգամ չէին կարող ընդունել Հոռոմի համաշխարհային տիրապետությունը պատրաստող կղերականները (Լեո),—գոյ.:

4. Որոշ օտար թերթերի անուններից (հզվդ. նաև հայկական) կազմվում են ածականներ -ակամ ածանցի քառակազմական նշանակությամբ, որոնք խոսքիմասային մասնակի փոխանցումով նաև գոյականներ են՝ «թերթերի կամ թերթերում արտահայտված գաղափարների կողմնակից անձ» իմաստով: «Իսկրա» թերթի անվանումից առաջացել է իսկրայական ածականը, որը խոսքիմասային փոխանցման ճանապարհով նաև գոյական է: Օրինակ. **ՌՍԴԲԿ** Ռիզայի կոմիտեն անվերապահորեն պաշտպանում էր իսկրայական գիծը (Հ. Արրահամյան),—ած.: Դադարը կը բնատե եղավ, իսկրայականները կոկին գործի անցան (Հ. Արրահամյան),—գոյ.:

Նույն եղանակով առաջ են պրավդայական, լուչական գոյականները, օր.՝ Պատեռավի սկզբից քարոզյալները բաժանվեցին երկու խմբի՝ «Պրավդայականների», «Լուչականների» (Հ. Արրահամյան): Հայկական «Մշակ» թերթի անվանումից՝ **Մշակականները** մի շատ ստոր արտաբերվող գրգռեցին շատերի զգվանքը (Հովհ. Թումանյան):

5. Սպորտային ակումբների, ընկերությունների և թիմերի անուններից կազմված ա-

ծականները վերածվել են գոյականների «այդ ակումբների, ընկերությունների, թիմերի անդամ» ընդհանուր իմաստով:

«Գիճամո»՝ դիճամոյական—Վճռական փուլում ուժերը կշարիվեն ևս երկու բանականյին, երեք դիճամոյական և մեկ արհմիութենական սուսերակիրներ (մամուլ),—ած.: Սակայն ընդմիջումից հետո դրության տերը դարձան դիճամոյականները: Առաջին խաղը շահել էին գավաթի ներկա տերերը՝ դիճամոյականները (մամուլ),—գոյ.: **«Տորպեդո»՝ տորպեդոյական**—Մրցաշարում իրենց լավ դրսևորեցին տորպեդոյական մարզիկները (մամուլ),—ած.: **Տորպեդոյականները** կատարեցին առաջադրանքը, բայց կատարեցին դժվարին ու ծանր մրցավեճից հետո (մամուլ),—գոյ.:

6. **«Տեղ, հիմնարկ, կազմակերպություն, որևէ վայր»** և նման ընդհանուր իմաստ ունեցող հասարակ գոյական նախատիպերից **-ական** ածանցով կազմված ածականների մի զգալի մասը, խոսքիմասային փոխանցումով նաև գոյականներ են՝ «նախատիպի ցույց տված տեղում ապրող, աշխատող, սովորող կամ որևէ կազմակերպության մեջ ինչ-որ բանով ըզբաղվող անձ» ընդհանուր իմաստով, ինչպես՝ բուհական, դպրոցական, պալատական, ճեմարանական, եկեղեցական, ամրոցական, համալսարանական, աքսորական, սիբիրական, քերական, վանական, անապատական, թեմական, կոնգրեսական, կոլտնտեսական, աշխարհական, դեպոյական, գավառական, թաղական և այլն:

Կաթողիկոսի հետ էին նրա հոբելյանին նվիրված հանդիսությունների համար արտասահմանի երկրներից Էջմիածին ժամանած հոգևոր և աշխարհական անձինք (մամուլ),—ած.: Իսկպես նա էր, թեև քահանա, բայց աշխարհականի հագուստով (Րաֆֆի),—գոյ.:

7. **«Անձ, մարդկանց խումբ, խմբավորում»** և նման իմաստ ունեցող գոյական նախատիպերից **-ական** ածանցով կազմված ածականները խոսքիմասային փոխանցումով նաև գոյականներ են՝ «նախատիպի անդամ կամ ներկայացուցիչ անձ» ընդհանուր իմաստով, ինչպես՝ աշխարհագրական, ավարդական (կարմիրզվարդիական, սպիտակզվարդիական), լեզունական, գորական, խորհրդական, զինվորական, ազգական և այլն:

Այդ հագուստը պատկանում էր մի զինվորական աստիճանավորի (Րաֆֆի),—ած.: **Զինվորականը** գալիս է դիմացից մի գեղեցիկ մանկահասակ կնոջ հետ (Նար-Ռոս),—գոյ.:

8. Այլ (թանձրացական և վերացական) գոյական նախատիպերից **-ական** ածանցով ածականները պահպանում են իրենց հիմնական բառակազմական նշանակությունը՝ «նախատիպին վերաբերող՝ հատուկ», բայց խոսքիմասային փոխանցումով պայմանավորված նաև գոյականներ են՝ անձի հասարակ անուններ, ինչպես՝ ուսումնական, առևտրական, շինական, քաղաքական, քրեական, փախստական, արտամիութենական, նախադպրոցական, անկուսակցական, օլիմպիական, ծխական և այլն:

Կյոռեսը և քաղաքամերձ չորս գյուղ բաժանված էին առևտրական երկու տների միջև (Ա. Բակունց),—ած.: Վաճառականների մի մասը քաղկացած էին վանեցի առևտրականներից, իսկ մյուսը՝ վանքի արեղաներից (Րաֆֆի),—գոյ.:

9. **-Ական** ածանցի միջոցով քայարմատ նախատիպերից կազմված մի քանի ածականներ ծամանակակից հայերենում ունեն նաև գոյականի արժեք՝ գործողի անվան նշանակությամբ, ինչպես՝ գաղթական, օգնական, բողոքական, վաճառական և այլն:

Գաղթական ժողովուրդը կոտորվում է սովից, ցուտից (Ա. Բակունց),—ած.: Մի տարի չկա մայրը մեռել է, հայրը հեշտությամբ նրա գլխաշորը նվիրում է... մի գաղթականի (Ստ. Զորյան),—գոյ.:

10. **-Ական** ածանցի միջոցով արմատական և ածանցավոր ածական նախատիպերից կազմված ածականները խոսքիմասային փոխանցումով ծամանակակից հայերենում նաև գոյականներ են՝ անձի հատուկ անուններ, ինչպես՝ ազնվական, օտարական, թշվառական, հավաքական, մտավորական, հոգեորական և այլն:

Նրա առաջ պատկերացած այն, որ իսկականն էր, այն առանձինը և ուրույնը, որ չէր նկատել օտարական նկարիչը (Ա. Բակունց),—ած.: Օտարականը կրկին և կրկին համբուրեց գեղեզմանը, և վերջին անգամ իր տխուր հայացքը ձգելով սև տապանաքարի վրա, վերցրեց իր ճանապարհորդական ցուպը (Րաֆֆի),—գոյ.:

Ծամանակակից հայերենում -ական ածանցով ածական-գոյական մասնակի փոխանցումներ կան, որոնք անձի հատուկ անուններ չեն:

Ա) Երկարժեք այս բառերը ածականական իմաստին զուգընթաց ունեն նաև գոյականական արժեք՝ «որևէ հանդիսությունների ծամանակ ասվող քանավոր խոսք կամ որևէ առիթով գրված գրավոր խոսք» իմաստով, ինչպես՝ բացատրական, դամբանական, գրախոսական, ընդդիմախոսական, ընծայական, թատերախոսական, խրատական, կենսագրական, հանձնարարական, համախոսական, մահախոսական, մեղայական, մեղադրական, ներածական և այլն:

Ընկերության անդամների միջոցով անհրաժեշտ է քացատրական աշխատանք տանել

(մամուլ),—ած.: Կորեյիան, զգալուս դրոշմային անհարմարությունը և հետզհետե անող վը-տանգը, փորձու է ավելի ընդարձակ բացատրականով ցրելու մթնոլորտը (Վրթ. Փափագվ-յան),— գոյ:

Բ) Ական ածանցով երկարժեք կազմություններ են նաև՝ շրջաբերական, պարբերական, փոխադրական, ավարտական, գրավական, խմբագրական և այլն:

Գ) Գիտական ոճում -ական ածանցով որոշ ածականներ դարձել են տերմիններ, մաս-նագիտական բառեր և դրանով պայմանավորված ունեն նաև գոյականական կիրառություն, մասնավորապես լեզվաբանության մեջ՝ գոյական, ածական, թվական, բացառական, սեռա-կան, կրավորական, ստացական և այլն, աշխարհագրության մեջ՝ միջօրեական, Ռորիզոնա-կան, զուգահեռական և այլն:

12. Զբաղմունք, պաշտոններ ցույց տվող նախատիպերով -ական ածանցով կազմու-թյունները ածականներ են «նախատիպին վերաբերող՝ հատուկ» ընդհանուր բառակազմա-կան նշանակությամբ: Այս բառերի մի մասը նշանակում է նաև «տեղ, սենյակ, շենք, որ նախատեսվում է նախատիպի ցույց տված անձերի համար», ինչպես՝ պրոֆեսորական, դե-պուտատական, գրաշարական, դերասանական, դասախոսական և այլն: Թերևս այս տիպի բառերից միայն դասախոսական բառի վերաբերյալ կարելի է ասել, որ այն ժամանակակից հայերենում ածականագոյական կայուն բառակապակցության կրճատման հիմքի վրա այս կամ այն չափով ձեռք է բերել գոյականի արժեք՝ դասախոսական սենյակ (ած.), բայց նաև՝ Բանասիրական ֆակուլտետի դասախոսականը գտնվում է նույն մասնաշենքի երրորդ հար-կում (գոյ.):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերևում նշված բառերի մի մասը արդեն գրաբարում ուներ խոսքիմասային երկու արժեք, ինչպես՝ զորական, շինական, վաճական, թշվառական և այլն: Կարծում ենք, այս կամ նման այլ բառերի միջխոսքիմասային փոխան-ցումների ակունքները պիտի փնտրել մեր լեզվի զարգացման նախագրային փուլում (Մաշ-տոցյան գրերի գլուխից առաջ), որտեղ և ավարտվել է այդ բառերի փոխանցման գործըն-թացը: Դասակարգված բառերի մեծ մասը գրաբարում միայն ածականներ էին (արեղակա-կան, դամբանական, քաղաքական, արքայական և այլն):

Պրավաչական, սահմանադրական, սպիտակզվարդիական, պառլամենտական, տորպե-դոյական և նման այլ բառերի խոսքիմասային փոխանցման գործընթացը կատարվել է ժա-մանակակից հայերենում:

Քննարկվող բառերը գործածականության տեսակետից նույն արժեքը չունեն: Ներկա-յացված բառերի մի մասը հայերենի զարգացման արդի փուլում գործածական է խոսքային իրադրության մեջ՝ կուսակցական, կոմերիտական, դպրոցական, ազգական, մտավորական, հեղափոխական և այլն. սրանք հիմնական բաղաձոնդի մեջ են մտնում: Սակայն կան քա-ռեր, որոնք մտնում են հայերենի բառային կազմի մեջ, բայց հիմնական բաղաձոնդի մաս չեն: Դրանք կազմում են.

ա) Պատմական բառերը

Այս բառերը գործածվել են մեր լեզվի անցած փուլերում. ժամանակի ընթացքում, տար-բեր հանգամանքներով պայմանավորված, դուրս են եկել գործածությունից և պահպանվում են հայերենի բառապաշարի զանձարանում, բայց կարող են գործածվել ըստ անհրաժեշ-տության, ինչպես՝ պապական, ծխական, թագավորական, բեզական, ամրոցական, բերդա-կան, աշխարհական և այլն:

բ) Ընդհանուր գործածություն չունեցող բառեր

Այս բառերը առօրյա գործածության և հաղորդակցման համար անհրաժեշտ բառեր չեն, բայց գործածվում են համապատասխան խոսքային իրադրության մեջ, ինչպես՝ լյու-թերական, պյութագորական, դարվիճական, թայմադական, բրահմադական, հեթանոսական, հնածիսական, օտարական, մեծապետական, մահախոսական, հաշտվողական, ազգայնական, դամբանական, խրատական և այլն:

-Ական ածանցով ածական-գոյական մասնակի փոխանցումների մեջ կան բառեր, որոնց մեջ գոյական խոսքիմասային արժեքը հայերենի պատմական զարգացման արդի փուլում գերիշխում է ածականի խոսքիմասային արժեքի վրա՝ նրանց գոյականական կիրառություն-ներն ավելի շատ են, քան ածականական գործածությունները: Այդպիսի բառեր են՝ վաճա-ռական, օգնական, մտավորական, հոգևորական, ածական, գոյական, թվական, զարդական, ազգական և այլն: Սրանք մենք դասակարգել ենք միջխոսքիմասային մասնակի փոխան-ցումների տակ, քանի որ սրանք այս կամ այն չափով դեռևս դրսևորում են ածականի խոս-քիմասային (հատկանիշի) ընդհանուր գաղափար: Այս բառերը ավելի մոտ են միջխոսքի-մասային լիակատար փոխանցմանը, քան մյուսները, բայց հայերենի պատմական զարգա-ցումը ցույց կտա, թե արդյո՞ք սրանք խոսքիմասային լիակատար փոխանցումների կենթարկ-վեն, թե՞ ոչ:

-Ական ածանցով ածականից գոյական մասնակի փոխանցումների մեջ կան բազմաթիվ բառեր, որոնք հավասարապես դրսևորում են և՛ ածականի, և՛ թե գոյականի խոսքիմասային արժեք, ինչպես՝ կոմերիտական, հեղափոխական, կուսակցական, դպրոցական, հավաքական, օլիմպիական և այլն:

Հայ գրողների առանձին ստեղծագործություններից, մամուլից կատարել ենք -ական ածանցով միջխոսքիմասային մասնակի փոխանցումների գործածությունների վիճակագրություն, որի պատկերը հետևյալն է:

Ստ. Ջորյան «Խնձորի այգին» վիպակ	գաղթական	ած. գոյ. ընդամ.		
		10	17	27
Ալ. Օրբվանզադե «Գործակատարի հիշատակարանից» պատմվածք	վաճառական	—	12	12
Դ. Դեմիրճյան «Վարդանանք» պատմավեպ	գորական	18	90	52
	վաճական	8	61	64
	շինական	5	111	116
	փախստական	8	1	4
	զինվորական	4	2	6
	հոգևորական	—	18	18
	պալատական	8	20	28
	օգնական	5	8	18
	օտարական	1	2	3
	եկեղեցական	—	6	6
խորհրդական	—	6	6	
կրոնական	1	—	1	
«Ավանգարդ» լրագիր № 68, 1987	կուսակցական	14	—	14
	դպրոցական	1	1	2
	կոմերիտական	5	1	6
«Խորհրդային Հայաստան» լրագիր № 218, 1987	կուսակցական	21	2	28
	հեղափոխական	2	1	3
«Հայաստանի ֆիզկուլտուրիկ» լրագիր № 66, 1987	հավաքական	10	1	11

Վերը նշվածից երևում է, որ Դ. Դեմիրճյանը տասնութ անգամ հոգևորական, երեք անգամ եկեղեցական բառերը օգտագործել է համապատասխանաբար որպես գոյական և ածական, բայց դա չի նշանակում, որ հոգևորական ածականը միջխոսքիմասային լիակատար փոխանցում է կատարել, վերածվելով գոյականի, իսկ եկեղեցական բառը միայն ածական է, և դեռ ածական-գոյական փոխանցման գործընթացը չի սկսել: Տարբեր հեղինակներ, բառ ստեղծագործության թեմայի ու նյութի, նախընտրում են -ական ածանցով բառերի խոսքիմասային տարբեր գործածությունները: Ինչ վերաբերում է հոգևորական, եկեղեցական բառերին, ապա դրանց մեջ առկա են թե գոյականի և թե ածականի խոսքիմասային ընդհանուր իմաստները: Այլ հարց է՝ թե այս բառերում խոսքիմասային ո՞ր իմաստն է գերակշռում:

Այսպիսի ուսումնասիրությունները կարծում ենք պայմանական բնույթ են կրում, թեև մեծ հետաքրքրություն են ներկայացնում մասնագետների համար:

Քննարկումից երևում է, որ հայերենում, ռուսերենում և անգլերենում ածականից գոյական փոխանցումները օրինաչափ երևույթներ են: Դրանք գոյական խոսքի մասը հարըստացնող միջոցներից մեկն են: Սակայն փոխանցման գործընթացի ժամանակ դրսևորվում են որոշակի առանձնահատկություններ, որոնք բացատրվում են այդ լեզուների քերականական կառուցվածքի բնույթով:

А. П. АИРАПЕТЯН—Несколько вопросов, касающихся частеречных переходов слов.—В статье изучается переход прилагательных в существительные в ермянском, русском и английском языках. Они рассматриваются как закономерные явления. предлагается ряд классификаций, выполнены исследования статистических данных частоты употребляемости слов. Отмечается также, что в процессе перехода из одной части речи в другую слова проявляют определенные особенности. которые объясняются характером грамматической структуры этих языков.